Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու և ավագանու մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու և ավագանու մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը՝ անհրաժեշտ է վերնագրում ***«ՀՀ»*** հապավումը բացել, միաժամանակ Նախագծով նախատեսվում է երկու որոշում ուժը կորցրած ճանաչել, որոնք ***մի շարք որոշումներ չեն***, ուստի ապահովելով իրավական որոշակիության սկզբունքի կիրառումը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը՝ անհրաժեշտ է Նախագծի վերնագրում հստակ նշել թե որ նորմատիվ իրավական ակտերն են ճանաչվելու ուժը կորցրած:

2. Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմ հղում է կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, ինչպես նաև «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ մասին:

Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն՝ *Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում* ***համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը,*** *դրանց փոփոխությունները,* ***ինչպես նաև նախագծման***

առաջադրանքները հաստատելու մասին՝ *«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:*

«Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:*

Վերոգրյալից ելնելով, անհրաժեշտ է Նախագծի վերնագիրը, 1-ին կետը համապատասխանեցնել լիազորող նորմին:

3. Նախագծի վերնագրի համաձայն նախատեսվում է հաստատել՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի*** տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը:

Մինչդեռ Նախագծի 1-ին կետով հաստատվում է ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք-4 համայնքի*** միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի կազմում ներառված ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Եղվարդ, Զովունի, Քասախ, Պռոշյան, Արագյուղ, Բուժական, Սարալանջ և Զորավան բնակավայրեր)*** տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:***

Վերոգրյալից ելնելով անհրաժեշտ է Նախագծի վերնագիրը և բովանդակությունը համապատասխանեցնել միմյանց:

4. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից,* անհրաժեշտ է

Նախագծի 6-րդ կետը վերանայել՝ հստակեցնել Նախագծի ուժի մեջ մտնելու պաշտոնական ժամկետները:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծին կից ներկայացվել են մի շարք փաստաթղթեր, որոնք որևէ կերպ համարակալված չեն, պարզ չէ թե դրանցից որոնք պետք է ենթարկվեն փորձաքննության և որոնք հետագայում ինկորպորացվեն, ուստի անհրաժեշտ է Նախագծին կից ներկայացված փաստաթղթերը ներկայացնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթի համապատասխան, որի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին:*

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

Recoverable Signature

X

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ